

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Նարեկը **բանահավաք** բառից հեռացրեց թռչունը, ապա խոսքը, մնացած տառերին ավելացրեց մեկ տառ և այդ տառերով ստացավ մի գեղեցիկ թռչուն: Ո՞ր տառն ավելացրեց Նարեկը գեղեցիկ թռչուն ստանալու համար:

Ա. գ Բ. ն Գ. զ Դ. ր Ե. կ

2. Պատասխանի տարբերակներից որի՞ «ընկերը» չկա Շ. Ազնավուրի բերված տողերում:

*Եթե նույնիսկ դու հիմա քո չար բախտն ես անիծում,
Քո հավատը առ գալիք թող չլքի դարձյալ քեզ,
Քո աչքերում, Հայաստան՝ն, ես ուզում եմ տեսնել հույս,
Եվ քո բախտը ուզում եմ քո ձեռքերում տեսնել ես:*

Ա. ակն Բ. ճակատագիր Գ. ապաշխարել Դ. նզովել Ե. ապագա

3. **Դասագիրք, դասամիջոց, դասընթաց, դաստակերտ, դասընկեր** բառերից չորսը ենթարկվում են նույն օրինաչափությանը: Ո՞րը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա. դասագիրք Բ. դասամիջոց Գ. դասընթաց Դ. դաստակերտ Ե. դասընկեր

4. *Մի բան կա, բանի նման չէ,
Ձու է ածում, հավի նման չէ,
Ոտքեր շատ ունի, կովի նման չէ,
Շատ է աշխատում, մարդու նման չէ:* (Ժողովրդական հանելուկ)

Ա. կրիա Բ. մրջյուն Գ. արագիլ Դ. թրթուր Ե. ծիծեռնակ

5. **Ի** տառը, միանալով **տեղ տալ, գործ դնել, հանկարծակի բերել, կրակ տալ, ձեռք բռնել** արտահայտությունների առաջին բաղադրիչի վերջից, փոխում է դրանցից չորսի իմաստը: Ո՞ր արտահայտությանը չկարողացավ միանալ **Ի**-ն:


Ա. տեղ տալ Բ. գործ դնել Գ. հանկարծակի բերել Դ. կրակ տալ Ե. ձեռք բռնել

6. Անգետիկը որոշեց ընկերներից հետ չմնալ և կատարել տնային հանձնարարությունը, բայց բոլոր առածները սխալ գրեց՝ բացի մեկից: Պատասխանի ո՞ր տարբերակում սխալ չկա:

Ա. Լռելը արծաթ է, խոսելը՝ ոսկի:
Բ. Ծուռ փայտը տաշելով կուղղվի:

- Գ. Կուշտը սովածին խոշոր կբբդի:
- Դ. Ծուլը ուտելիս հիվանդ է, աշխատելիս՝ առողջ:
- Ե. Մի ձեռքով երկու ձմերուկ չեն բռնում:

7. Ո՞ր բառն է թաքցրել մեղվիկը:

ունկ, սուր, անուն, արմունկ, 

Ա. գեկուցում Բ. ուրուր Գ. հարցում Դ. ամրություն Ե. կատու

8. Տարբերակներից չորսում մեկական տառ նույն սկզբունքով և՛ պոչ է, և՛ գլուխ: Ո՞ր տարբերակն է գուրկ այս հատկությունից:

Ա. շնորհանդես Բ. աղբյուր Գ. հասարակարգ Դ. աշխարհայացք Ե. գառնարած

9. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

ՆՌՌ

Ա. նռան տերև Բ. նռնենու արմատ Գ. նուռ տեսա Դ. նուռ առա Ե. նեղ ռանդա

10. *Նվագավարական* բառում առավելագույնը քանի՞ չորս կամ ավելի տառ ունեցող տարբեր բառ կկարդաս ձախից աջ՝ առանց տառերը տեղաշարժելու:

Ա. 5 Բ. 6 Գ. 8 Դ. 10 Ե. 11

4 միավոր գնահատվող առաջադրանքներ


11. Հարցի մեջ փնտրիր, թե ինչպիսի մարդկանց է գնահատում *տնտեսվար պետությունը*:

Ա. գիտակ Բ. վարպետ Գ. ընկերասեր Դ. ճարտարագետ Ե. բանիմաց

12. Պատասխանի տարբերակներից որի՞ «ընկերն» է հնարամտորեն թաքնվել *եղյամ, ուռենի, լրագիր, հրանոթ, միջադեպ* բառաշարքում:

Ա. ավյուն Բ. կայսր Գ. երանգ Դ. մետաղ Ե. սլացք

13. Վարդգէ՛ս, Վարդուհի՛, Անահի՛տ, Արմէ՛ն, քանի՞ մարդու քար տանք,

որ  պատն այսօր շարեն:

Լուսինեն որոշակի օրինաչափությամբ նախադասության մեջ թաքցրել է ամեն մեկիս փոխարինող բառեր: Ո՞ր բառն է թաքցրել Լուսինեն մեղվիկի օգնությամբ:

Ա. ձեր Բ. արագ Գ. նրանք Դ. մերոնք Ե. հանգիստ

14. Լսոնք ձեռք մեկնեց ընկերոջը, որը պատմել էր իր գլխով անցածը: Նա աշխարհ տեսած մարդ էր, կարող էր խելքի բերել շատերին, մարդ դարձնել, սակայն իր հարցում անտարբեր էր, ամեն ինչ թողնում էր բախտի քմահաճույքին:

Ամենաշատը քանի՞ դարձվածք կա բերված հատվածում:

Ա. 3 Բ. 4 Գ. 5 Դ. 6 Ե. 7

15. Բառերի ո՞ր եռյակը քառակուսու մեջ լրացնելիս քառակուսու տողերով և սյուներով՝ վերևից ներքև, ձախից աջ, կկարդանք բառեր:

Ա. սեպ, պահ, երթ
Բ. սպի, պար, արև
Գ. սեր, կոպ, սեպ
Դ. կոդ, դար, որդ
Ե. արև, հնք, պահ

16. *Ամեն անգամ կարդալիս
Չարմանում եմ նորովի,
Ասում եմ ես ինքս ինձ՝
Արմանք-զարմանք գործ է սա.
Ներկայացնել մի ազգի
Անհերքելի ու ճշգրիտ՝
Մի բույսի օրինակով:*

Հայ գրողի ո՞ր ստեղծագործության մասին է խոսքը: Պատասխանը թաքնված է բերված տողերում:

Ա. Տաղարան Բ. Վարդը Գ. Մասրենի Դ. Ալլախական մանուշակ Ե. Մասիսին

17. Նանեն որոշակի օրինաչափությամբ կազմեց *կամք, քամի, իրիկուն, նկարակալ* բառաշարքը: Մարիամը բառաշարքում գտավ մեկ այլ օրինաչափություն և շարունակեց բառաշարքը՝ պահպանելով երկու օրինաչափությունները: Պատասխանի տարբերակներից ո՞րը գրեց Մարիամը:


Ա. կալվածատուն Բ. լարախաղաց Գ. ալոճաթիթեռ
Դ. լավատեսություն Ե. կամավորություն

18. *Անանց, անհաս, անտես, անմեռ, անբավ* հատկանիշները միևնույն հնարքով անմիջապես «կատարվեցին», բացի մեկից: Պատասխանի ո՞ր տարբերակում է անփոփոխ հատկանիշը:

Ա. անանց Բ. անհաս Գ. անտես Դ. անմեռ Ե. անբավ

19. Պատասխանի տարբերակների ձախ կողմի պատկերներից չորսը որոշակի օրինաչափությամբ վերածվել են աջ կողմի պատկերներին: Տարբերակներից ո՞րն է շեղվել այդ օրինաչափությունից:

Ա.



Բ.



Գ.



Դ.



Ե.



20. *Կերոն, լարում, վարած, կարոտ, լակոտ, նորեկ, մուրալ, տոկալ, ծարավ* բառերից ութը միևնույն օրինաչափությամբ չորս բառագույգ են կազմում: Ո՞ր բառը բառագույգ չի կազմում:

Ա. կարոտ Բ. մուրալ Գ. վարած Դ. կերոն Ե. լակոտ

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Պատասխանի տարբերակներից ո՞րն է կարդացվում ձախից աջ և վերևից ներքև ուղղություններով:

Մ	Ե	Ս	Տ	Ա
Ա	Ղ	Վ	Ե	Ս
Ն	Ր	Ա	Պ	Ա
Ա	ՈՒ	Բ	ՈՒ	Ն
Պ	Ե	Ս	Յ	Ծ

Ա. սեղանապետ Բ. աղվեսապար Գ. մեղվաբույծ
 Դ. մեղվապարս Ե. սեղանատուն


22. ԲԵՐ ԵՐԿՆԻ ԳՈՒՅՆԸ ԱՆԳԱՄ ԵՐԲ բառերից մի քանիսում տառերն իրենց տեղերը փոխել են: Ի՞նչ նախադասություն կստացվի, երբ տառերը վերադառնան իրենց տեղերը:

- Ա. Բեր երկնի գույնը մի գնա, բեր:
- Բ. Բեր երկնային գույներ, անգամ մթնով:
- Գ. Երբ երկնագույնը անգամ գունատ էր:
- Դ. Երբ ներկի գույնը մգանա, բեր:
- Ե. Բեր ներկերից երկնագույնը անգամ:

23. Պատասխանի նախադասություններից մեկն իր ներսում «թաքցրել է» մի հետաքրքիր օրինաչափություն: Ո՞րն է այդ նախադասությունը:

- Ա. Հեռանամ, ապա գնամ:
- Բ. Մեծանամ, ապա ման ածեմ:
- Գ. Քայլեմ, ապա արագ վազեմ:
- Դ. Հասկանամ, ապա լուծեմ:
- Ե. Խմեմ, ապա հաց ուտեմ:

24. Բերված պատկերներից վեցի անվանումներն առանց որևէ փոփոխության զույգ առ զույգ «սոսնձվում» են ու կազմում երեք նոր բառ: Ո՞ր պատկերը մյուսներից ոչ մեկի հետ զույգ չի կազմում:





25. Այս նախադասության մեջ ամենաշատը քանի՞ տարբեր ազգական էր ուղիղ նստած երբեմնի հարստությունից մնացած պապենական տան այգում՝ աթոռանման հինավուրց կոճղերին, և մայրամուտից առաջ ունկնդրում, թե ինչպիսի մեղմ ու հաստատուն ձայնով էին հայրենի երգեր երգում քեռորդին ու մորաքույրը:

Ա. 5 Բ. 7 Գ. 8 Դ. 11 Ե. 12

26. Մանեն կազմում է նախադասություն և դրա բառերը գրում առանց բացատների: Հետո նա գրվածը տրոհում է պատահական տեղերից, մասերը խառնում իրար ու ստանում հետևյալը.

իր գամ տ որդ նպատ ուն վեց քեռի

Ի՞նչ նախադասություն էր կազմել Մանեն:

- Ա. Վեց նպատակ ուներ քեռին:
- Բ. Քեռին գամվեց իր անկողնուն:
- Գ. Քեռին նպատակ ուներ որդուն ուսման տալու:
- Դ. Քեռին պատգամ տվեց իր որդուն:
- Ե. Գամ, գնանք տուն, քեռին սպասում է:

27. Պատասխանի ո՞ր տարբերակի բառերով է հնարավոր լրացնել խաչքառը: Նույն նշաններին համապատասխանում են նույն տառերը:


Ա. Հորիզոնական՝ խաղավար, քարավան, բավարար
Ուղղահայաց՝ տատանակ, տապանակ, չաչանակ

Բ. Հորիզոնական՝ կաղապար, տաղարան, տաղավար
Ուղղահայաց՝ տատանակ, տապանակ, չաչանակ

Գ. Հորիզոնական՝ քավարան, քարավան, տաղավար
Ուղղահայաց՝ տատանակ, տապանակ, հավասար

Դ. Հորիզոնական՝ գավազան, պահապան, խաղավար
Ուղղահայաց՝ խաղաքար, նավավար, դատարան

Ե. Հորիզոնական՝ բալասան, պատահար, շարական
Ուղղահայաց՝ պապական, տատական, չարական



28. Գայանեն խառնագրեր էր կազմում իր սիրած հեղինակների անուններից ու նրանց ստեղծագործությունների անվանումներից: Պատասխանի տարբերակների հեղինակներից որի՞ ստեղծագործությունն է գաղտնագրել Գայանեն «*ՄԱՏԸՐԻՏ*» խառնագրով:

Ա. անմույթան Բ. հակասինայ Գ. դերագանվիշ Դ. նիմդեյճրա Ե. նայգրո

29. *Նշանակել, ջեռուցել, ճմռել, ոչնչանալ, շորորալ* բառաշարքի բոլոր բառերը, բացի մեկից, որոշակի օրինաչափությամբ կապված են իրար: Նրանցից ո՞րը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա. նշանակել Բ. ջեռուցել Գ. ճմռել Դ. ոչնչանալ Ե. շորորալ

30. Մեկնելով խառնագրերը՝ կատանաս նոր բառաշարք, որում բառերից մեկն «ավելորդ» է: Պատասխանի տարբերակներից որի՞ խառնագիրն է «ավելորդ»:

ԳԵՏԱՔԱՐ, ԿԱՏԱՂԵԼ, ԿԻՄԱՏՈՆ, ՄԱՐԶԱՆՔ, ԱՆՀԱՏԱԿ

Ա. գետաքար Բ. կատաղել Գ. կիսատոն Դ. մարզանք Ե. անհատակ